

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԵՍԱՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳԻ

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**ԺԳ.00.01 – Մանկավարժության տեսություն և պարմություն
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման արենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

**Արենախոսության թեման հաստատվել է Շիրակի Մ.Նալբանդյանի
անվան պետական համալսարանում:**

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Մ.Ս.Իսախիրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Էդ.Ի.Այվազյան**

մանկավարժական գիտությունների
թեկնածու **Ա.Ս.Ալեքսանյան**

Առաջադար կազմակերպություն՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 7-ին՝
ժամը 14⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության
ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մարտի 7-ին:

**Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ**

Ա.Փ.Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մարդկային հասարակության բազմադարյան պատմության ընթացքում ֆիզիկական կուլտուրան և սպորտը մշտապես ուղեկցելով մարդուն՝ ունեցել են տարբեր նպատակներ՝ որսորդության միջոցով կյանքի համար անհրաժեշտ սննդի ձեռքբերումից մինչև ժամանակակից օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոնի կոչումը նվաճելը կամ մարդուն ֆիզիկապես կոփելը, նրա առողջությունը ամրապնդելը, հայրենիքի պաշտպանության նախապատրաստելը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության նախարարությունները և գերատեսչությունները, ՀՀ կառավարության կողմից հաստատված իրենց կանոնադրություններում չունեն և ոչ մի հոդված ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և ֆիզիկական դաստիարակության, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության հետ մարզական հարցերով փոխհարաբերությունների մեջ մտնելու վերաբերյալ: Մինչդեռ ՀՀ կրթության և գիտության, ՀՀ պաշտպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունն իրենց համակարգերում ունեն կրթական հաստատություններ՝ նախադպրոցական հաստատություններ, դպրոցներ, ուսումնարաններ, քոլեջներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդումը պարտադիր է:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման մարմինների հետ համահունչ գործում են շուրջ 100 մարզաձևերի ազգային ֆեդերացիաներ, բազմաթիվ մարզական հասարակական կազմակերպություններ, ակումբներ և մարզաբազաներ:

Տնտեսավարման նոր ժամանակաշրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվող պետական մարմինների, այդ թվում՝ պետական կառավարման լիազորված մարմնի և պետական կառավարման այլ մարմինների լիազորությունների շրջանակները հստակեցման և ընդլայնման կարիք ունեն: Նույնը վերաբերում է նաև ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների ճշգրտմանը և գործունեության արդյունավետության բարելավմանը: Ատենախոսության հիմնախնդիրը պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների առանձնահատուկ համա-

գործակցության և փոխներգործության մեթոդաբանության միջոցով ֆիզիկական դաստիարակության դերի բարձրացումն է, ինչը առաջադրում է ուսումնասիրել պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների պատմական ձևավորման ու զարգացման ընթացքը և ուրվագծել արդյունավետ փոխհարաբերությունների ուղիները: Սրանով է պայմանավորված հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների առկա վիճակի ուսումնասիրումը, օպտիմալացման իրավական դաշտի ստեղծումը և գիտական հիմնավորումով այդ փոխհարաբերությունների հստակեցումն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հստակեցնել ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավունքներն ու պարտականությունները, պետական կառավարման այլ մարմինների հետ այդ գծով նրա դաստիարակչական, կազմակերպական և իրավական գործունեությունը կանոնակարգելու համար:

2. Կարգավորել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի փոխհարաբերությունները ՀԱՕԿ-ի, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, մարզական հասարակական մյուս կազմակերպությունների հետ:

3. Ֆիզիկական դաստիարակության և սպորտի գծով համագործակցության իրավական հիմքեր ստեղծելու համար նախապատրաստել ծրագրաիրավական փաստաթղթեր պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների միջև:

4. Բացահայտել պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունավետությունը, դպրոցականների և երիտասարդների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման և մարզական բարձրագույն նվաճումների հարցերում:

5. Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ սոցիալոգիաների արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակության համակարգում մշակվել և իրավաբանորեն հիմնավորվել է գիտական հետազոտությունների նոր ուղղություն:

2. Գիտական շրջանառության մեջ է դրվել պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների մանկավարժական հիմնավորվածության տեխնոլոգիական համակարգը:

3. Պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների իրավաբանորեն հիմնավորված առանձնահատուկ համագործակցության միջոցով լուծվել է ֆիզիկական դաստիարակության օգնությամբ մարզիկների վարքագծի, ֆիզիկական զարգացման և նրա վրա սպորտային հստակ միջոցներով ներգործելու խնդիրը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Հանրապետությունում գործող մարզական հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական կուլտուրայի ու ֆիզիկական դաստիարակության գործով զբաղվող պետական մարմինների միջև օրենսդրական և իրավական հիմքերով կառուցված համագործակցային փոխհարաբերությունները:

2. Ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով զբաղվող պետական մարմինների իրավասությունների և պարտականությունների ճշգրտման և հստակեցման նպատակով իրավական դաշտի սահմանումը կարող է նպաստել հանրապետության ազգաբնակչության, այդ թվում՝ սովորողների և երիտասարդության ֆիզիկական պատրաստության բարելավմանը, ֆիզկուլտուրային և մարզական աշխատանքների ակտիվացմանը:

3. Ֆիզիկական դաստիարակության հարցերով զբաղվող մարզական հասարակական կազմակերպությունների և հանրապետության պետական մարմինների միջև իրավական հիմքերով սահմանված փոխհարաբերությունների ստեղծումը նպաստում է հանրապետությունում մարզական շարժման վերելքի ապահովմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ լայն և հիմնավոր կերպով ընդհանրացվել են պետական կառավարման մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, ինչպես նաև նախանշվել են այդ համագործակցության կատարելագործման ուղիները և կոնկրետացվել առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների համատեղ գործողությունները նպաստում են դպրոցականների ու երիտասարդության՝

➤ ֆիզիկական պատրաստության բարելավմանը և մարզական վարպետության բարձրացմանը,

➤ հանրապետության ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության հարցերով զբաղվող ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կանոնադրություններում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ դրույթների ներառմանը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված արխիվային նյութերի գրականության ցանկից, հավելվածից, ներառում է 18 տրամագիր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 123 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

«Դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակությամբ և նրանց անձի ձևավորմամբ ու զարգացմամբ զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների գործունեության առանձնահատկությունները» խորագրով առաջին գլխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, դիտարկվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման պետական մարմինների գործունեության առանձնահատկությունները, մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունները և դրանց ընդլայնման անհրաժեշտությունը:

Գիտական և արխիվային նյութերի, իրավանորմատիվային փաստաթղթերի վերլուծությունը հնարավորություն տվեցին բացորոշել, որ մեր ժողովրդի դարավոր պատմության միայն վերջին հարյուրամյակում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում երևան եկել պետական կառավարումը և մարզական հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման հարցերով զբաղվում են ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Կառավարությունը և մարզպետարանները, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, մի շարք այլ նախարարություններ (ՀՀ պաշտպանության, ՀՀ կրթության և գի-

տության, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ մշակույթի և այլն) և գերատեսչություններ (ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ կառավարության առընթեր ոստիկանություն և այլն)՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի, ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության պետական քաղաքականությունը իրականացնելիս սահմանում է դրանց ռազմավարությունը, մշակում է իր առաջիկա տարիների հայեցակարգերը և հեռանկարային ծրագրերը, միջոցներ է ձեռնարկում բնակչության ֆիզիկական պատրաստականության համալիր չափորոշիչների մշակման և առողջության բարելավման, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի կատարելագործման, ֆիզիկական կուլտուրայի զանգվածայնության և մարզաձևերի հետագա զարգացման նպատակային ծրագրերի մշակման և իրագործման համար:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը զբաղվում է նաև իր համակարգի մեջ մտնող նախադպրոցական հաստատությունների, հիմնական, ավագ միջնակարգ դպրոցների, միջնակարգ մասնագիտական, արհեստագործական և բարձրագույն ուսումնական հաստատությունների երեխաների և ուսանողների ֆիզիկական դաստիարակության հարցերով, ինչպես նաև «Աշխատանքային ռեզերվներ» հասարակական մարզական կազմակերպության հետ յուրաքանչյուր տարի կազմակերպում է դպրոցականների սպարտակիադաներ, տարբեր մրցաշարեր և մարզական խաղեր, իսկ «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության հետ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ամենամյա սպարտակիադաներ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ կառավարության առընթեր ոստիկանությունը և ՀՀ ազգային անվտանգության պետական ծառայությունը յուրաքանչյուրն իր համակարգի աշխատողների և ծառայողների, ինչպես նաև պարտադիր զինծառայության մեջ գտնվող զինվորների համար մշակում, հաստատում և իրագործում են ֆիզիկական դաստիարակության հատուկ ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրենց համակարգերում աշխատողների համար նախատեսված ֆիզիկական կարողությունների տիրապետմանը, պահպանմանը և զարգացմանը, ծրագրերում հաստատված թեստային չափորոշիչները կատարելու պատրաստվածությանը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անընդհատության պահպանմանը, մարզական բարձր ցուցանիշների և

արդյունքների ձեռքբերմանը, ֆիզիկապես կոփմանը և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ լինելուն:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ տարածքային կառավարման նախարարության աջակցությամբ միջոցներ է ձեռնարկում հանրապետության մարզերում՝ քաղաքային և գյուղական համայնքներում, Երևանում ֆիզկուլտուրային շարժումը բարելավելու՝ ըստ բնակչության վայրի մարզական աշխատանքներն աշխուժացնելու, ուսումնական հաստատություններում և մարզադպրոցներում ուսումնամարզական պարապմունքները և դասաժամերն ավելի բարձր որակով և արդյունավետությամբ կազմակերպելու ուղղությամբ:

Այնուհանդերձ, հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների գործունեությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակության ոլորտներում կանոնակարգման կարիք ունի:

«Հայաստանի Հանրապետության մարզական հասարակական կազմակերպությունների գործունեության բովանդակության և ֆիզիկական դաստիարակության ժամանակակից խնդիրների լուծման յուրահատկությունները» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից, որտեղ նշվում է, որ հանրապետության նախադպրոցական տարիքի երեխաների, դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակության ներկա վիճակը կարիք ունի հիմնավոր բարելավման, որի կատարման հարցում մեծ դերակատարում ունեն ոչ միայն ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող պետական մարմինները, այլև հենց հանրապետության գործող բազմաթիվ մարզական հասարակական կազմակերպությունները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մարզական հասարակական կազմակերպությունների համակարգի մեջ ընդգրկված են.

1. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն,
2. տարբեր մարզաձևերի ազգային ֆեդերացիաները,
3. հանրապետական մարզական հասարակական կազմակերպությունները,
4. մարզական ակումբները և մարզաբազաները:

ՀԱՕԿ-ի հիմնական նպատակն է՝ հանրապետությունում զարգացնել օլիմպիական շարժումը, աջակցել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, օլիմպիական գաղափարների տարածմանը, պայքար ծավալել սպորտում՝ ազգային, ռասսայական, քաղաքական, կրոնական և այլ խտրականությունների դեմ, դիմակայել սպորտը քաղաքական նպատակներով շահարկման փորձերին:

ՀԱՕԿ-ը մշտական կապերի մեջ է ՄՕԿ-ի և փոխհարաբերությունների մեջ հանրապետության մարզական ֆեդերացիաների, մարզական

հասարակական կազմակերպությունների և ակումբների հետ՝ վերջիններիս մշտապես ցույց տալով ֆինանսական, տնտեսական, կազմակերպական, բարոյական և այլ աջակցություն:

Ֆեդերացիան կարող է համագործակցել ՀՀ պետական մարմինների, ՀԱՕԿ-ի, այլ մարզական ֆեդերացիաների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, իրավասու է ՀՀ պետական մարմիններին ներկայացնելու իր կանոնադրական դրույթներից բխող առաջարկություններ, իր կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների միջոցով հիմնել սարքավորումների, գույքի ու հանդերձանքի, ֆեդերացիայի խորհրդանշով հուշանվերների, ազդագրերի և կրծքանշանների, հուշադրոշների և այլ իրերի արտադրություն:

Ներկայումս հանրապետությունում գործում են 4 հանրապետական մարզական հասարակական կազմակերպություններ՝ որոնք ունեն իրենց աշխատանքային գործունեության կոնկրետ բնագավառները: Այսպես՝ «Սևան» մարզական հասարակական կազմակերպությունն իր կանոնադրությանը համապատասխան հանդիսանում է գյուղական համայնքների, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարությունների, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգերում գործող բոլոր կազմակերպությունների աշխատողների զանգվածային ֆիզկուլտուրային և մարզական աշխատանքները ղեկավարող կազմակերպություն և գործում է՝ սերտ համագործակցելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ:


Հանրապետության հանրակրթական դպրոցների սովորողների, աշխատողների և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական դաստիարակության հարցերով զբաղվում է «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպությունը, որը սերտորեն համագործակցում է ՀՀ կրթության և գիտության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ՀԱՕԿ-ի և այլ մարզական կազմակերպությունների հետ:

«Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը անդամակցում են ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և նրա ոլորտում գործող բոլոր ստորաբաժանումների ծառայողները և ՀՀ ազգային անվտանգության ծառայության ոլորտի աշխատակիցները:

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությունը զբաղվում է հանրապետության բոլոր բուհերի ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատողների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև մի շարք արտադրական և շինարարական հիմնարկների աշխատակիցների ֆիզիկական դաստիարակության հարցերով (տրամագիր 1):

Պերական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունները

Տրամագիր 1



Դրա հետ մեկտեղ հանրապետության դպրոցականների, ուսանող և զինծառայող երիտասարդների և ազգաբնակչության տարբեր տարիքային խմբերի ֆիզիկական դաստիարակության հարցերով զբաղվող Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, տարբեր մարզաձևերի ազգային

Ֆեդերացիաների, մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների հստակեցման վերաբերյալ իրավական դաշտի սահմանումը, դրանց գործունեության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծումը և իրավունքների ու պարտականությունների շրջանակի ընդլայնումը կարող է նպաստել հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացմանը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են «**Պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների, դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակության գործում նրանց միջև հաստատված փոխհարաբերությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը**»:


Հարցախույզի նպատակն էր՝ ուղիներ ընտրել՝ կանոնակարգելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտով զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխշահավետ հարաբերությունները, իրավական դաշտի ստեղծման համար այդ ոլորտում առաջարկություններ ներկայացնել:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 272 ռեսպոնդենտներ, որոնցից 53,6%-ը մարզիչ-մանկավարժներ էին, իսկ մնացածները տվյալ ոլորտի այլ աշխատակիցներ, որոնք ուղղակի կամ որևէ այլ կերպ առնչվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հետ:


Նպատակ ունենալով պարզաբանելու հարցման մասնակիցների տեղեկացվածությունը ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների գործունեության բովանդակության և միմյանց միջև առկա փոխհարաբերությունների մասին՝ գրանցել ենք բավական մտահոգիչ փաստեր, քանի որ ռեսպոնդենտների միայն 41,2% են տվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության անունը (տրամագիր 2), 53%-ը՝ որպես հասարակական մարզական կազմակերպություններ տվել են ՀԱՕԿ-ի և մի քանի ազգային ֆեդերացիաների անունները (տրամագիր 3):

Այն հարցին, թե «Ինչ իրավունքներ և պարտականություններ ունի «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությունը», հարցվածներից 29,4%-ն է տվել դրական պատասխան, իսկ մարզաձևերի ազգային ֆեդերացիաների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցին 70,6%-ն է եղել դրական:

Տրամագիր2
Պետական մարմինների զբաղվածությունը ֆիզիկական կուլտուրայով և սպորտով



Տրամագիր3
Հարցվողների իրազեկվածությունը մարզական հասարակական կազմակերպությունների վերաբերյալ




Այն հարցին՝ «Արդյո՞ք պետությունը պետք է ֆինանսավորի ՀԱՕԿ-ին, մնացած բոլոր մարզական հասարակական կազմակերպություններին և «Մեծ սպորտին», հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 94%-ը տվել է դրական պատասխան, դրանով ամրագրելով իրենց կարծիքը, որ պետությունը, կենսագործելով ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները պարտավոր է նպաստել հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացմանը (տրամագիր4):

Հանրապետությունում դեռևս մշակված, փորձարկված և հաստատված չեն երեխաների, դեռահասների, երիտասարդների և մեծահասակների ֆիզիկական պատրաստության չափորոշիչները: Մեր այն հարցին՝ անհրաժեշտ է, արդյոք, պետական և հասարակական կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ կազմակերպել համայնքային, մարզական և հանրապետական եռափուլ մրցումներ ազգաբնակչության ֆիզիկական պատրաստության վիճակը պարզելու և համապատասխան չափորոշիչներ ընդունելու համար, հարցվողների բացարձակ մեծամասնությունը՝ 97,6%-ը, տվել են դրական պատասխան:


Մենք դիտարկում ենք այն հանգամանքը, որ ներկա ժամանակաշրջանում դպրոցականների առողջական վիճակի ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության բարելավմանը զգալի կնպաստի ֆիզիկական դաստիարակության արտադասարանական աշխատանքների վերականգնումը, որը փաստել է հարցվողների 97,06%-ը (տրամագիր5):

Այն հարցին, թե արդյոք փոխհամագործակցում են ՀԱՕԿ-ը և մարզաձևերի ազգային ֆեդերացիաները, դրական են պատասխանել 35,5%-ը, իսկ ՀԱՕԿ-ի և «Հայաստան», «Սևան», «Դինամո» և «Աշխատանքային ռեզերվներ» հանրապետական մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների վերաբերյալ դրական պատասխան են տվել 41,2%-ը:

Տրամագիր 4
Հարցվողների կարծիքը ՀԱՕԿ-ին, հասարակական մարզական կազմակերպություններին և մեծ սպորտին ֆինանսավորելու վերաբերյալ




Տրամագիր 5
Հարցվողների կարծիքը ֆիզիկական դաստիարակության արդարասարանական աշխատանքների վերականգնման մասին



Հարցվողների 93,4%-ը նշել են, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման ներկա ժամակաշրջանում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունները իրավական կարգավորման կարիք ունեն:

Այն հարցին, թե պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների համագործակցությունը բնակչության ֆիզիկական կուլտուրայի հարցերում լինի արդյունավետ, ինչ է անհրաժեշտ կատարել (հարցվողներին տրված էր հնարավորություն ընտրել 1-ից ավելի պատասխաններ) (տրամագիր 6):

Տրամագիր 6
Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունավետության պայմանները (%)



1. Կնքել փոխհամագործակցության պայմանագիր և խստագույնս առաջնորդվել պարտավորվածությունների կատարմամբ, 2. Ցուցաբերել պետական աջակցություն, ֆինանսավորում, 3. Լավագույն փորձի քարոզում և խրախուսում, 4. Բոլոր տեսակի քարոզչական աշխատանքների իրականացում՝ հատկապես հեռուստատեսությամբ, 5. Հրատարակել նյութեր՝ իրազեկելու պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների բոլոր աշխատակիցների հետ կնքված պայմանագրի դերի և նշանակության մասին, 6. Պետական մարմիններում և մարզական հասարակական կազմակերպություններում աշխատանքների փուլային կատարումը հրամանով ամրագրել կոնկրետ անձանց վրա, 7. Վերականգնել նախկին «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» (ՊԱՊ) համալիրը, 8. Վերականգնել սկզբնական մարզական ակումբները:

Հարցման արդյունքները հստակ վկայում են, որ անհրաժեշտ է ձեռնարկել համալիր միջոցներ պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Այսպիսով՝ սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս փաստել.

1. Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, դպրոցականների և երիտասարդության ֆիզիկական դաստիարակության խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով անհրաժեշտ է առավելագույնս հստակեցնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով զբաղվող բոլոր պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները, ընդլայնել հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գործունեության շրջանակները:

2. Անհրաժեշտություն է առաջանում «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ուղղված հասարակական մարզական կազմակերպությունների իրավասությունների ընդլայնմանը, տարբեր տիպի հասարակական մարզական կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների հստակեցմանը, ինչպես նաև հասարակական մարզական կազմակերպությունների և պետական մարմինների միջև փոխադարձ շահավետ կապերի ստեղծմանը:

3. Հանրապետության ազգաբնակչության առողջական վիճակը բարելավելու, դպրոցականների, երիտասարդության, ուսանողների և հատկապես զինծառայողների ֆիզիկական դաստիարակության խնդիրները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ժամանակն է

վերանայել հանրապետության պետական բյուջեում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կազմակերպման և հետագա զարգացմանն ուղղված միջոցներն ավելացնելու հարցը:

4. Անհետաձգելի լուծում է պահանջում, որ բոլոր դպրոցներում վերականգնվեն ֆիզիկական դաստիարակության արտադասարանական աշխատանքները, տարրական դասարաններում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերը պետք է վարեն միայն ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքները մեզ հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

1. Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի հարցերով զբաղվող պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև մարզական հասարակական կազմակերպությունների կանոնադրություններում բացակայում են պատանիների, սովորող և ծառայող երիտասարդների ֆիզիկական դաստիարակության ոլորտում միմյանց հետ փոխհարաբերությունները հստակեցնող, նրանցից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող իրավական հիմքերը,

2. Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվող նախարարությունների և գերատեսչությունների ՀՀ Կառավարության կողմից հաստատված կանոնադրություններում, ՀՀ պաշտպանության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններում, ՀՀ ոստիկանությունում և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում բացակայում են ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտում գերատեսչական և միջգերատեսչական փոխհարաբերությունների վերաբերյալ դրույթները:

3. Սոցիոլոգիական հարցման արդյունքներն ամրագրում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, պատանիների ու երիտասարդության ֆիզիկական դաստիարակության հարցերով զբաղվող պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների փոխշահավետ հարաբերությունների անբավարար վիճակը:

4. Կազմակերպված ուսումնասիրության արդյունքերով անհրաժեշտություն է դառնում.

4.1. պետական մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների իրավական փոխհարաբերությունները կանոնակարգելը, մշակել և պետականորեն հաստատված հանրապետության ազգաբնակ-

չության ֆիզիկական պատրաստության չափորոշիչներն ըստ տարիքային խմբերի, սեռի և բնակավայրերի բարձրություն մշակելը,

4.2. միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության տարիներին «ֆիզիկական կուլտուրա» առարկայի բարձրորակ դասավանդում ապահովելը, դպրոցներում արտադասարանական մարզական խմբերի գործունեությունը վերականգնելը,

5. Կոնկրետ միջոցառումներ իրագործելու, տեղերում խորհրդատվություններ անցկացնելու, ֆիզիկական կուլտուրայի արտադասարանական պարապմունքներ կազմակերպելու, քարոզչական աշխատանքներն ուժեղացնելու, համագործակցության պայմանագիր կնքելու (աշխատանքային ծրագրեր մշակելու և իրականացնելու արդյունքում նկատելի դրական տեղաշարժեր տեղի ունեցան պետական մարմնի և մարզական հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների և փոխադարձ կապերի բարելավման հարցերում),

6. Պետական մարմինները և մարզական հասարակական կազմակերպություններն իրենց փոխհարաբերությունները արդյունավետ դարձնելու գործընթացը հարկ է դիտեն ոչ միայն որպես միջոց ֆիզիկական դաստիարակության արդյունավետությունն ապահովելու պայմաններում, այլև՝ որպես ինստիտուցիոնալիզացված կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակով՝ ընդգրկվելով կազմակերպական-իրավական, սոցիալ-մանկավարժական, տնտեսական հարաբերությունների մեջ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Եսայան Ա. Գ., Հայաստանի Հանրապետության կառավարման մարմինների և հասարակական մարզական կազմակերպությունների փոխհարաբերությունները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 38-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2011, էջ 130-134:
2. Եսայան Ա. Գ., Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի փոխհարաբերությունները հանրապետության պետական և հասարակական մարզական կազմակերպությունների հետ, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 39-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2012, էջ 89-93:
3. Եսայան Ա. Գ., ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական կառավարման հանրապետական մարմինների գործունեության

- բովանդակությունը, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 39-րդ գիտամեթոդական կոնֆերանսինյութեր, Երևան, 2012, էջ 93-97:
4. Եսայան Ա. Գ., Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ղեկավար մարմինների գործունեությունը ֆիզիկական դաստիարակության ոլորտում, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 40-րդ գիտամեթոդական կոնֆերանս նյութեր, Երևան, 2013, էջ 116-120:
 5. Եսայան Ա. Գ., Սպորտի Եվրոպական խարտիայի դրույթների իրագործումը հանրապետության պետական կառավարման մարմինների և մարզական հասարակական կազմակերպությունների կողմից, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 40-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան 2013, էջ 120-123:
 6. Եսայան Ա. Գ., Հայաստանի Հանրապետության մարզական հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2014, էջ 133-137:
 7. Եսայան Ա. Գ., ՀԱՕԿ-ի հիմնադրումը և հիմնական գործունեությունը: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածներ իժողովածու, Երևան 2014, էջ 137-141:
 8. Եսայան Ա. Գ., «Ֆիզիկական կուլտուրա» առարկան, որպես աշակերտների և ուսանող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության հիմք, «Մանկավարժություն», Երևան, 2015, N 4, էջ 53-63:
 9. Եսայան Ա. Գ., «Քաղաքացիաիրավական պայմանագրերի հասկացությունները և դրա նշանակությունը»: Սպորտային մանկավարժական գիտության 43-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2016, էջ 144-148 (համահեղինակ.Վ.Գ. Եսայան):

ЕСАЯН АНАИТ ГЕВОРКОВНА
РЕЗУЛЬТАТИВНОСТЬ ВЗАИМООТНОШЕНИЙ ГОСУДАРСТВЕННЫХ
ОРГАНОВ И ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ В ОБЛАСТИ
ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 7 апреля 2017 г. в 14⁰⁰ на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025 г. Ереван, улица Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 203

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В современных экономических условиях не полностью скоординирован круг полномочий и взаимодействия между государственными управляющими органами и общественными спортивными организациями. Следовательно возникает необходимость формирования и развития взаимоотношений между государственными органами и общественными спортивными организациями, а также указания путей повышения эффективности данных взаимоотношений.

Цель работы: исследование существующих взаимоотношений между государственными органами, занимающимися вопросами физической культуры, спорта и общественными организациями, их научным обоснованием и созданием правового поля.

Задачи исследования:

1. Уточнение прав и обязанностей Армянского республиканского управляющего уполномоченного государственного органа по физической культуре и спорту с другими государственными управляющими органами и в этом формате упорядочение их воспитательной, организационной и правовой деятельности.
2. Упорядочить взаимоотношения между управляющим уполномоченным государственным органом по физической культуре и спорту и АОК-ом, национальными федерациями по видам спорта, другими общественными спортивными организациями.
3. Создать правовые основы и подготовить программно-правовые документы в формате сотрудничества между государственными органами и общественными спортивными организациями, отвечающими за физическую культуру и спорт,.

THE PRODUCTIVITY OF RELATIONS OF STATE AUTHORITIES AND SPORT SOCIAL ORGANIZATIONS IN THE FIELD OF PHYSICAL EDUCATION

Dissertation for the scientific degree of candidate of Pedagogical Sciences on the Speciality 13. 00.01 "Theory and history of pedagogy".

The defense of the dissertation will take place on April 7, 2017, at 14⁰⁰ at the meeting of specialized Council on Pedagogy 065 HAC in the YSU.

Address: 0025, Abovyan str. 52a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, Auditorium N 203.

SUMMARY

The relevance of the research. The rights circle of state authorities dealing with issues of physical education, including authorized state administration body and other state administration authorities, are not simplified and need some specification. The same problem concerns the sport social organizations dealing with physical education and sport, improve the productivity of activities. Hence the problem stands to study the historical formation and development of relations between state authorities and sport social organizations and to outline the ways of productive relations.

The objectives of the study present status of relations between state authorities for physical culture and sport issues and sport social organization, the creation of legal field of optimization and maximum specification of these relations with scientific substantiation.

The aim of the study: taking into account the aim, the logic of research realization, the degree of theme workmanship, actuality and protection provisions we have set the following issues:

1 to study the rights and responsibilities of authorized state administration body of RA physical culture and sport, for regulating educational, organizational and legal activity of other in sport issues.

2 to regulate the relations between authorized state administration body of physical culture and sport and ANOC, National sport federations, other sport social organizations.

3 to prepare legal program documents for creating cooperation legal basis between state authorities and sport social organizations in the field of physical education and sport.

4 to reveal cooperation productivity of state authorities and sport social organizations in the issues of organizing schoolchildren's physical education and higher achievements in sport.

5 to analyze the results of public polls concerning the issue.

4. Выявить результативность сотрудничества между государственными органами и общественными спортивными организациями по вопросам организации физического воспитания школьников и молодежи и в спорте высших достижений.

5. Проанализировать результаты социологического опроса относительно основных положений.

Научная новизна исследования.

1. В системе физического воспитания школьников и молодежи разработано и юридически обосновано новое направление научных исследований.

2. Введена в научный оборот педагогически обоснованная технологическая система взаимоотношений государственных органов и общественных спортивных организаций. Данная система создает оптимальные условия для управления физическим развитием школьников и молодежи и воздействует на формирование личности специальными спортивными средствами.

3. Юридически обоснованы особенности взаимоотношений государственных органов и общественных спортивных организаций, на основе которых решаются задачи физического развития и формирования личности средствами физического воспитания и спорта.

Теоретическая значимость исследования состоит в том, что широко и обосновано обобщены взаимоотношения государственных органов и общественных спортивных организаций в области спорта, а также отмечены пути совершенствования взаимоотношений и конкретизированы их особенности.

Практическая значимость исследования состоит в том, что организации, занимающиеся вопросами физического воспитания, физической культуры и спорта, совместной деятельностью содействуют:

- улучшению физической подготовки и повышению спортивного мастерства школьников и молодежи.
- В положениях министерств и комитетов республики внедрению пунктов, касающихся вопросов физического воспитания и спорта.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Она составляет 123 компьютерных страниц, содержит 18 диаграмм.

THE RESEARCH SCIENTIFIC NOVELTY

1. it has been developed and legally grounded a new direction of scientific researches in the system of schoolchildren's physical education, which being connected with analysis of pedagogical methods, provides the formulation of positive attitude towards legally grounded physical education, physical culture and sport.

2. the technological system of pedagogical ground of relations between state authorities and sport social organizations has been put into scientific circulation, which creates optimal conditions for schoolchildren's and youth attitude, physical development and affect with sports special measures.

3. the legally grounded specific cooperation of state authorities and sport social organizations has solved the problem of with sports special measures on sportsmen attitude, physical development with the help of physical education.

The theoretical significance of the research lies in the fact that relations between state authorities and sport social organizations in the field of physical education and sport has been widely and basically generalized, the ways of improving these relations have been mentioned and defined specifications as well.

The practical significance lies is the fact that cooperation of state authorities busy with issues of organizing schoolchildren's physical education and sport and social sport organizations provides schoolchildren's and youth

- physical preparation and raising sport skills
- including provisions of physical education and sport in the statutes of ministries and departments dealing with issues of physical education

The thesis structure. The thesis consists of introduction, three chapters, conclusions, archive materials, list of references and applications. It has 123 computer pages, 18 charts.

